



ԾԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԾԵՐԳ- ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Բ. ՏԱՐԻ

ԹԻԻ 11

2 ՓԵՏՐՎԱՐ

1908

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Բարաքքա [ՎԻՔՅՈՌ ՀԻԿՈ-Ի]

Գոյնեռու Աշխարհէն

Խորեակախար Մաղիկը

Գաւառական Բանաստեղծութիւն

Յանգապատում

Ժպիտ

Սիրոյ Բնագանցութիւնը

ԶԱՐԵՂ ՆԵՄՅԷ

Պատար [Գաւառական Պատկեր]

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

ԲՐՈՑ. ՅԱԿՈԲՈՍ ԶԷՃԻԶԵԱՆ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՔԼԿԱՏԻՆՅՈՆ

ՍՐԱԶԵԱՅ

Ռ. ՍԵՒԱԿ

ԱՐԹՈՒՐ ՇՕՐԷՆՀԱՌԻԷՐ

ՅԱԿՈԲ ՏԷՍԻՐՃԵԱՆ

30 ՈՍՄԿԻ ՊԱՐԳԵՒ

ՏԵՍՆԵԼ ԹԻԻ 7 "ՄԱՍԻՍ"Ը

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱՂԲ. ՃԻՀԱՆ

1908

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS DEPARTMENT

PHYSICS DEPARTMENT
UNIVERSITY OF CHICAGO
CHICAGO, ILL.


PHYSICS DEPARTMENT
UNIVERSITY OF CHICAGO
CHICAGO, ILL.

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ,
ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ
զատ, մասնագիտարար և երկար տարի-
ներէ ի վեր կը դարմանէ ստամոքսի,

աղիքներու, միջալին ճաժաներու հիւանդութիւնները, ջգային տկարութիւնները, հին և նոր գաղիակաւն արտերը : Այս վերջին արտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ : Հիւանդը կ'ընդունին ամէն օր կէս օրէ մի քան : Զօրեքայրիկի օրերը միայն ճրի :



Անկարելի է որ ընտանիք մը առանց
լարի մեքենայի մնայ, բայց էական
կէտն է լաւ մեքենայ մը ունենալ,
որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ
և անհամար ծառայութիւններ կը
մատուցանէ, մինչդեռ զէշ տեսակէ
մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
և տագնապի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Մ Ի Ն Կ Է Ր

ՀԱՅՐԱՅՐԻԶ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
միանգամայն մեկնանք
կը գնուին :

միևեկին ան լաւագոյնն է, այս մե-
քնանն ամէնէն աւելի կատարելա-
գործութեամբ, հաստատունը և գիւրա-
գործածելէն ըլլալուն՝ բունանդա-
աշխարհի մէջ՝ ամէն ոք Սիմկիբի մե-
քնանները կը գնէ :

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուլին միմիայն Սինկէրի Ընկերու-
թեան վաճառատուններուն մէջ՝

[illegible]

I. U. I. U. O. U.

1. Մեծ փողոց , Պօն Մանչէի դէմ, 343 և 343.
2. Մեծ փողոց , Կալաթա Սէրայի Լիւսէին դէմ .

ԲԵՐՍ.

1. Սինկէր խան, Թիւնէլին ևտեւը .
2. Դարաքէօյ, Թրանիլէյի կայարանին դէմ .

QALIFU

1. Սուլթանն Համամ .
2. Սուլթանն Պէյաղիա, Թրամուկի կարն, կն ու էմ. 13.

ՄԷԻՒՏՄ.Բ

Զարչը Պոյոու, Թ. 120.

Դասերը եւ ցորոգուլիւցները ձրի .

Կատարեալ երաշխաւորութիւն :

Մասնանիւղեր գաւառներու բոլոր փաղափներուն մէջ

Սինկերի Ընկերությունն Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ Փողոց, Թիւ 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղողլուի ստանդարտ

ժ. ՍԻՄՕՆ.

Բարիզ



ՔՐԷՄ

ՍԻՄՕՆ

Կիսեթևով պատրաստւած

եւ առանց որ եւ է հարգական խղի

Հաւաքոյն արտադրութիւնն է
ան՝ պահպանելու համար ԳԷՄ-

ՔԻՆ ՈՒ ՉԵՌՔԵՐՈՒՆ

Ճերմակորիւնը

1900ին բարիզեան ոսկի շնորհամ

Քրեմ Սիմոնը մօրթը կը պահպանէ օղին ազդեցութեան ղէմ .
ճաթառութեան , կարմրութիւններուն և խորշակահարութեան
առաջքը կ'առնէ :

Եթէ վրայէն Սիմոնի բրնձափոշիի թեթև խաւ մը քսուի ,
դէմքի գոյնին երիտասարդութեան շլացուցիչ վառ մը կու տայ :
Պէտք է ամէն օր գործածել զայն , թաց լաթով մը մօրթին վրայ
աւարածելով և յետոյ մեղմ շփումով մը ներս թափանցել տալով :

Ճարտարին ոչ մէկ մարմին չպարունակելով , ամբողջովին կը
լուծուի ջուրին մէջ :

ՄԻԱԿՆ Է Ս.Ն ՈՐ ԸՆԳՈՒՆՈՒՄԸ ԸՆԼԱՅ ԲՈՒՈՐ ԳԵՂԱՆԻ ԳԵՐԱՍԱՆՈՒՀԻ-
ՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ :

1860ին հնարուած , իսկապէս առողջապահիկ ու ամենաառաջ-
նակարգ Քրեմն է ան աղւորութեան : Բովանդակ աշխարհի մէջ
իր ունեցած յաջողութիւնը առաջ բերած է բազմաթիւ կեղծեր ,
որոնցմէ պէտք է խորշիկ ու խոյս տալ :

Քրեմ Սիմոն , բրնձափոշի Սիմոնը և Սիմոնի
օճառը կը գտնուին զեղարաններուն , անուշահոտ-
թեան վաճառատուններու և պարզաբար մէջ :

Դնած ասեմ պէտք է լաւ ճնշել վրձնաւանդեր՝ որ պէտք է բլլա-
նվի պակեթին ճիշտ նմանը :





ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ՆՆՈՎՅԱՆ ԱՐՄԵՆ

ԾԵՐԴ: ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Բ. ՏԱՐԻ

ԹԻԻ 11

2 ՓԵՏՐՎԱՐ

1908

ԲԱՐԱԲԲԱ

Հրէշային մառախուղի ծաղքերուն տակ՝ որով թաթխուած է երկինք՝ քաղաքը քառս մըն է դարձած տուներու և փողոցներու: Քիչ առաջ բանտապանները ցատկոտ խօսակցութեամբ խառն ի խուռն իրարու պատմելով խաչելութեան պատահարը, բացին Բարաբբայի բանտը, խզեցին անոր շղթաները և ըսին իրեն. — «Ե՛լ գնա. Ժողովուրդը շնորհք ըրաւ քեզի»: Այնպէս որ Բարաբբա ուս գիտէ միայն թէ՛ իր դուռը հրուեցաւ, թէ երկինք մութ է բոլորովին, թէ ոչ ոք կը հալածէ զինքը, և թէ կրնայ սլանալ ստուերին մէջ՝ իբր գիշերուան թռչուն մը:

Այն ընտրութիւնը՝ որով Յիսուս կը սպաննուի և ինք կ'ապրի, ամբողջ այդ պատմութիւնը կը գինովցնեն զինքը: Կը թափառի քաղաքին մէջ, կը սողոսկի, կը սպրդի, դուրս կ'ելլէ անկէ քնաչրջիկ մարդու մը պէս: Ի՞նչ ճամբու կը հետեւի. առաջին անգամ դէմը ելածին: Առաջ կ'երթայ, կը վարանի, բան մը կը փնտռէ նսեմ անհունութեան առջեւ, բայց կը շարունակէ առանց գիտնալու: Քաղաքին պատերը ետին մնացին, բայց ան զանոնք չտեսներ. խռովեալ ճակատը կը խոնարհի և չընդունարեք բնաւ թէ՛ բլրակէ մը վեր կ'ելլէ: Ելլել, իջնել, երթալ գալ, երէկ, այսօր, այս ամէնը ի՞նչ փոյթ. ան կը յածի, թափառկոտ ամպ մը ունենալով իր ներսը: Կը դեգերի, կ'անցնի կ'երթայ՝ յաւիտեա

նակտան մէջ , երազ և անդունդ մը՝ բխրեալ խորը : Երբեմն . կ'ըսէ ինքնին . «Այս՝ ես եմ քաղօղը» : Ամէն ինչ ա'յնչափ խառնուած է որ՝ կը բլշակնի ան . ճամբան սրուն կը հետեւի զիգուածաբար՝ սոգոսկուն է և կը խորատուզուի զէպի լերան մը կողերը՝ ուր հազիւ կ'աճի տատառ-կը : Եւ Բարաբրա մտահոգ՝ կը մազլէ ժայռն իվեր , առանց աեռնելու թէ՛ ս'ըր կ'երթան իր քայլերը , և կը թողու որ երթան : Տեղին տար-տամ սոսկումը հաճոյ կը թուի այդ գայլենի հոգիին : Քիչ մը ժամանակ ելլելէ հաքը՝ ինքզինքը կը գտնէ մառյլ տարածութեան մը վրայ՝ որ գագաթի մը կը նմանէր . կանգ կ'առնէ , յետոյ կը պարզէ իր թեւեւ-ըը , և կը սկսի լսն մը զիտեղ այդ վայրագ խորութեան մէջէն : Քա-լած առնն՝ արդեւքի մը կը հանդիպի , կը հպի անոր . «Ի՞նչ է այս ծա-սը . ո՞ւր եմ ես» , կ'ըսէ Բարաբրա և այդ մտթ ծաւին երկայնքն իվեր կը բարձրացնէ իր երկու խաղուկները , զորս սակաչն հազիւ կ'ուզ-ղէ երկար տտեն չգլթայ կրած բլլալուն պատճառով : «Յից մըն է այս ծաւը» , կ'ըսէ ան : Կատաղի տանջանքներով հաշմուած մտաները անոր վրայ կը պատցնէ , և յանկարծ՝ դեզնա՛ծ՝ անհամբար ոտքեր կը չօչա-լիէ : Ետ կը քաշէ ձեռքը , սոսկացած՝ բուի մը պէս՝ որ իր սողաթիմե-րուն տակ կը սա՛նի , և ձեռքը թրջած է բոլորովին : Այդ ոտքերը պազ են , բեւեռ մը ծակած է զանոնք . արիւնով , լիզիով և տիզմով հա-մակ լպրծուն է փայտը . Բարաբրա խեղայեղ կ'ընկրկի . զարհուրած՝ կը բացուի աչքը թանձր ստուերին մէջ՝ որ կը ծածկէ զայն , և կամաց կամաց՝ մառյլ հաստատութեան տակ իր նայուածքին առջև կը ստուե-րազրուի տժգոյն ու սև ծրագիծ մը . խաչ մըն էր ան : Ներքեւը կը տեսնուի աման մը՝ ուր թաթխուած է եղէգնի մը չուրջը անցուած զո-պայի մշտիկ մը . և սոսկալի ցիցին վրայ՝ մերկ՝ արիւնոտ՝ մեռուտ աչ-քերով՝ վայրահակ ճակտով՝ մարմինին ծանրութիւնը կրող խաղուկներով մէջքը կանեփեայ չուան դօտիով մը պատած՝ կողը ծակուած՝ ոտքերը , գամուած , կ'քած՝ կախ՝ վիրաւոր՝ քանակո՛ծ՝ անզգացած գիտիկ մը կ'ե-րեւայ՝ ճերմակ և կարծես երազի գերեզմանական մութ կապոյտովը լուսաւորուած . և խաչը կը բարձրանայ լուծեան խորը :

Բարաբրա քունէն ընդօստ մարդու մը պէս կը սարսառայ : Իրաւ կախաղան մըն էր ան , անարգ՝ ազտեզի՝ ահաւոր՝ և սեպերով հաս-տատուած աւաղին վրայ : Նը դիտէ զայն . անբացատրելի էր իր սոս-կումը . երկինք լուծուած էր կծու գոլորշիի մը մէջ՝ ուր ոչինչ կը զգայ մարդ՝ բաց միայն թէ կը վախնայ : Ամէն կողմ չուչացաւ կուրուքիւն , սաղութիւն , փախուստ մը խաւարած՝ զարհուրած՝ կամ նշմուած կեան-քէ : Պատահեք Յովսափատու վրայ , պատահեք Սիրոնի վրայ , անձայրա-ծիր մթութիւնը տախտատանութեան երեւոյթ մը ունէր , ծածկուած էր աշխարհ անուանարկիչ գիշերով մը . այդ բեկումը աւելի սեւ էր քան մրրիկը . չունչի և չախնդի այդ շիջանուած : Հոգիի աչքին համար՝ գի-

չերուան այն առուերով՝ որ ընթեռնելի կ'ընեն անդննելի խորհուրդը՝ ձեռք մը կը գրէր աներևոյթին խորը, պատասխանատուութիւն մարդուն՝ Աստուծոյ առջեւ : Կռութիւնը, մութ միջոցը, ժամը՝ տեղը՝ ժայռը՝ արիւնը՝ խաչը՝ բնականորէն դատաւորներ կը թուէին, եւ Բարաբրա՝ այս առուերին հանդէպ անապատան՝ սարսեցաւ իբր օրէնքին հանդէպ, եւ երկինք նայելով՝ ըսաւ. «Ա՛հ, ես չեմ» :

Յետոյ ինքն այլ ցնորք մը՝ այդ անխաղաց զիշերին մէջ, խռովեալ, դողդոջուն թրթուր՝ գեղնած ու գանդազ կը մօտենար կախաղանին, եւ գէպի ձայնը երթալու առնէ՝ սիրտը դողով՝ կը խոնարհէր, շարժուն կոճակին վրայ առաւանդ կայմի մը պէս, եւ հակառակ իր սոսկումին՝ կը տարուէր գէպի ան՝ այդ մեռելէն արտափայլող լոյսին տեսակէն հրապուրուած : Ի ջր ուրուական մը՝ ճիգ կ'ընէր ելլելու համար մօտը միւս ուրուականին, վերջալոյսի մը պէս տարտամ. եւ այդ մարդը՝ առաջ կ'երթար գէմբով մը, անհանգիստ, քստմնած՝ իբր հովէն յուղում, եւ պատրաստ՝ գէպի առաջ ըրած իւրաքանչիւր քայլէն փախչելու :

Մեռեալը՝ Յիսուս՝ տգոյն ճառագայթում մը կը ծաւալէր : Մահը չհամարձակելով ինքնին վերջանալ, թողած էր որ խանդակաթե խորհրդաւոր նայուածքի նշմարը ծածանի՝ անոր աչքերուն տրտում եւ արիւն նոս ծակերէն : Վայրահակ ճակատը կարծես կը լուսաւորուէր, ո՛րչափ այդ մարդը կը մօտենար երերուն քայլերով : Երբ Բարաբրա մօտ գնաց, բիրը շողաց : Եթէ երկինքէն եկած հրեշտակ մը հո՛ն գտնուէր, պիտի կարճէր թէ գերեզմանի մը արձաւիրքներուն մէջ՝ աղաւնիի մը աչքով կախարդուած օձ մը կը սողար : Եւ յերուզակը՝ վայրկեանէ վայրկեան աճող մշուշի թանձրութեան տակ կորացած կը դիտէր. երկիրը որբացեալի կերպարանք մը ունէր. սոսկերը կը խոկար : Այն առնէ՝ այդ դերբուկ բլրակին վրայ, եւ տխրամած ու նոսմացած ընդարձակ երկինքին տակ, իբր թէ անվսխման խոկաններու սարսուռը իջնէր եզերական թեւերը բացող այդ խաչափայտէն, չգիտցուիր ի՞նչ ոգի մը մտաւ այդ մարդուն խաւարին մէջ, եւ զարհուրելի ըրաւ զայն : Խորին կրակ մը ցայտեց իր շանթահարիչ աչքէն : Ագամի անհուն հոգին՝ Գողգոթային տակ հանգչած՝ կարծես յանկարծ երեսն եկաւ, այդ խստերախ գողին մէջ : Եւ երբ կը խօսէր ան, արձակելով անէծք՝ ճիշդ՝ զայրոյթ՝ թշնամանք, բոցեղէն լեզու մը՝ անոր գլխուն վերեւ կը շողար ու կը թռչէր՝ իբր հովէ մը փոթորկուած. եւ Բարաբրա կանգուն՝ այլակերպ՝ դողահար՝ զարհուրելի՝ պոռաց. — «Ժողովուրդ, ո՛վ ժողովուրդ, ի՞նչ ըրիր. ո՛վ Կայէն, Դաւթն, Նեբրովթ, դուք ըսէք. ո՛վ մարդոց բազմութիւն, քիչ մը առաջ այդ Յիսուսի ոտքերուն առջեւ կը խոնարհէիր, հասարակաց վայրերու մէջ զինքը պաշտելու համար կը վազէիր, դոյգ մը հրեշտակային թեւեր կը տեսնէիր անոր ուսերուն վրայ, քու հո-

վիւր էր ան, քու առաջնորդէ, քու նեցուկդ: Այն ինչ երեւան կու գայ մարդ մը բարիք գործելու համար քեզի, ո՛վ ժողովուրդ, քեզի բերելու համար երկնային պատգամ մը, քեզ աւելի լաւ, հոգեւորապէս աւելի զօրաւոր, աւելի քաղցր, աւելի իմաստուն ընելու համար, բանալու համար քեզի մտայլ երկինքը, մեռելներու յոյսը, նախ կը հետեւիս անոր, յետոյ յանկարծ կը խաճնես զանի. սա՛ Յիսուան է, իսկ նա Բարաբրա:

Հրեշտակապետը մեռաւ, և ես՝ մեղապարտ՝ կ'արձակուիմ. ի՞նչ, մէկ կողմը երկինք, միւս կողմը մեղք. հո՛ւ՛ սէր՝ խաղաղութիւն՝ ներում՝ աղօթք՝ մարած և լոյսի լուծուած շանթ, բժշկուած հիւանդներ, յարութիւն տաւած մեռելներ, ու կեանքով և շողերով համակ ծածկուած էակ մը. հո՛ւ՛ Յիսուսը սպաննողը:

Ո՛հ, եթէ ինծի դային հարցնէին, եթէ պարանոցս դեռ կնիքի տակ եղած ատեն՝ Պիղատոս զար զիս անանկ յարկիս վրայ և ինծի ըսէր. «Օ՛հ, քեզի թողուած է ընտրութիւնը, այսօր տօն է, պէտք է խաչել մէկը, կամ Գալիլիացի Բրիսաոսը՝ կամ քեզ, չիկերէ՛, պատասխան տուր, աւագակ, երկուքէդ ո՞րը կ'ուզես որ փրկուի, դաստակներս պարզելով կ'ըսէի իրեն. «Զի՛ս խաչեցէք»: [Համառոտուած ձեւովը գրուածքին և թարգմանուած Սրբազանէն՝ իր վարդապետութեանը օրով: Խմբ. Ծան.]

ՎԻՔՅՈՒ ՀԻԿՈ-Ի

ՆՂԻՇԷՆ ՆՊԻՍԱԿ ԴՈՒՐՆԱՆ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Աղբեր մի Մրգա շեններ
Օրոյսն արծաթ եւ դրեր,
Երկու բռնի, աղւոր աղբիկ
Սափորով ի ջուրն նետեր,
Երկու փեկիկան կը յիմ
—Աղբի՛կ, պապիկան արեւուն
Պսիկ մը ջուր տուր ինծի:
—Ջուր տուր ե, չե պապեր,
Մեր սիրուն շաւ մարդ մեռեր:
—Ջուր տուր որ մը ըլլ մեռնիկ
Ամենեկ ֆիւմեր մեր չե ծներ:
Մեկ ազնիւի մի սեր անկայ ի գլխու
Գիշերն երազես, ցորեկն ի սրտես
Կորուսեր եմ զիմ անկողնան սիրելիս:
Անոր համար կը պոքսիմ ի սարերն ի ձորերն.
Ի միսս որ գայ, կը բռնչի խելսս ի գլխու,
Այլերս արիւն կը բորբոքի ի սրտես,
Աշուղ եմ ես, որ ելեր եմ ճակատս,
Անոր համար կը պոքսիմ ի սարերն ի ձորերն:

ԹԼԿԱՏԻՆՅՈՒՆ

ԳՈՅՆԵՐՈՒ ԱԾԽԱՐՅԷՆ

Գոյներու հրաշափառ աշխարհին մէջ թափառած ատեննիս՝ գոնէ պարզ տեղեկութիւն մը անոր կազմութեան մասին, անհրաժեշտ է մեզ՝ մարդկային էակներու համար, որ անշուշտ պէտք չէ որ այնչափ անգիտ ըլլանք անոնց վրայ՝ որչափ դաշտին վրայ արածող եղը և կամ այն միամիտ թռչուններուն նման, որոնք այնչափ անգիտակցաբար կը թռչան նորաբողբոջ ոստերուն մէջ :

Գոյնը ինչ ըլլալ կը կարծէք, ինչպէս կ'արտադրուի ան : Աչքերնիս կը յառնէք սա գեղեցիկ, թարմ մանուշակին վրայ և մեզի շատ բնական կ'երեւայ մտածել թէ՛ այդ անուշ, դրեթէ երկնային գոյնը ծաղիկը ինք կը բլրեցնէ կամ կը ցոլացնէ իրմէն : Բնական կու գայ մեզ կարծել թէ՛ իր ստացուածքն է այն գոյնը՝ զոր իր վրայ տեսնելով կը հիւսնանք . մինչդեռ իրողութիւնը տարբեր է բոլորովին : Որ և է բնական մարմին ինք իրմէն գոյն չի չիներ : Մարմիններուն պաշտօնը շնորհալի է միայն, ոչ թէ ստեղծական . չինող չեն, այլ ընտրող միայն : Եւ զարմանալին ան է որ՝ որ և է մարմին՝ իր ընտրած գոյնը չէ որ կը ցոլցադրէ հանրութեան, այլ իր չընտրածը, չհաւնածն է որ ցոյց կու տայ :

Գոյնի մը խօսքով բացատրենք ըսածնիս : Գիտէք թէ արեւին լոյսը՝ որ սպիտակ կ'երեւայ մեզի՝ միացումն է այն եօթը տարբեր ու գեղեցիկ գոյներուն, զորս կրնաք տեսնել երբ ծիրանի գօտին գոյներու փառքը կը կազմէ երկինքի կապոյտին վրայ : Այդ եօթը փառահեղ գոյները իրարու հետ միանալով կը կազմեն ձերմակ գոյնը . իսկ բաժնուելով՝ ինչպէս եղած են ծիրանի գօտիին վրայ, եօթը տարբեր գոյները կը կազմեն : Արդ, մարմիններուն պաշտօնն ալ միշտ բաժանում է : Անոնք միշտ ընտրելու և զատելու միջոցով է որ կ'ըլլան գունաւոր : Արեւը իր եօթը գեղեցիկ գոյները՝ միացած վիճակի մէջ, անոնց կը ներկայացնէ . կ'ըսէ անոնց. «հաւնեցէք որուն որ կ'ուզէք այս գեղեցիկ գոյներէն, զայն ձերը ըրէք, խմեցէք, ծծեցէք զայն և մնացածը, չհաւնածնիդ, ետ տուէք, արձակեցէք, ետ տուէք այն լայնարձակ և անհուն արեւզերքին, ուրկէ առիք ձեր հաւնածը» : Եւ ահա՝ մարմիններուն չհաւնածը, մերժածն է որ կ'երեւայ մեզի, իր ցոլանալովը . ա՛ն է անոր գոյնը՝ կ'ըսենք . աւելի ուղիղ կ'ըլլայ եթէ ըսենք՝ ա՛ն է անոր մերժած, չընդունած, չհաւնած գոյնը : Մաղիկին կամ ուրիշ որ և է մարմինի մը ընտրած, հաւնած գոյնը մեզի չերեւար . ան պահուած է ծաղիկին ծոցին, կուրծքին մէջ . ան դուրս չհանուիր : Աւելի տպաւորելու համար ասիկա միտքի վրայ, ձեռք առնենք գոյները զատ զատ եւ տանք անոնց բաղադրութիւնը : Առնենք սևը նախ . ինչո՞ւ սև է . սա պարզ պատ-

ճառով որ բոլոր գոյներուն ալ հաւնող՝ սիրող մըն է այդ սե առարկան .
 և ուստի բոլոր գոյները մէկէն անյադարար ներս կ'ընդունի , կը պահէ
 զանոնք ամէնքը իր մէջը , անոնց և ոչ մէկը ազատ արձակելով . և
 ահա՛ մեր աչքին կը ներկայացայ սեւ գոյնը , որ գոյներու և լոյսի բա-
 ցակալութիւն կը նշանակէ գիտութեան մէջ : Սեւը գոյներուն զէրօն ,
 գոյներուն ռէն է : Սեւը ճշմարիտ պատկերն է ինքնասէր , անձնապաշտ
 մարդոց . ան բոլոր իրեն ներկայացուածը իր մէջ ու իր վրայ կը կեղ-
 րոնացնէ : Յօին մէջ կ'ընկղմին , կը կորսուին ամէնը և ոչինչ դուրս
 կը ցոլացուի : Արծաթ , ոսկի , պաաիւ , մեծութիւն , փառք , սէր ,
 վայելք ամէնը իրեն համար ու իր մէջ պէտք է պահուին . ասոնք բան
 մը չունին դուրսի աշխարհին համար . և հետեւաբար ամէնէն 'ազիւ ,
 անփայլ , անհրապօր արարածներն են իրենք , ինչպէս է խաւարը ,
 ինչպէս է սեւը : Կը հաւնի՞ք դուք ձեզի , ձեր մօտը , դմնեայ կերպա-
 րանքին , պարոն ինքնասէրներ : Բնութիւնը ձեր ճակատին վրայ դրոշ-
 մած է սեւ կնիքը , և ան չմաքրուիր անկէ , մինչև որ կեանքերնիդ
 չփոխէք :

Առնենք հիմա կարմիր վարդ մը . ինչո՞ւ կարմիր է ան . որովհետեւ
 կարմիր վարդին կազմութիւնը այնպէս է որ բոլոր ուրիշ գոյները կը
 ծծէ իր մէջ և միայն իր չօրած կարմիր գոյնը դուրս կը ցոլացնէ՝ զոր
 մենք կը տեսնենք , և որուն պատճառով վարդը կարմիր կ'երեւայ մեզ :
 Լուսապատկերացոյց գործիքով լոյսին եօթը գոյները իրարմէ որոշակի
 կը զատուին : Լուսեղէն այս պատկերին մէջ եթէ կարմիր ժապաւէն մը
 պատկերին կարմիր լոյսին մէջ դրուի , կարմիր ժապաւէնը աւելի յտակ
 և կենդանի գոյն մը կ'առնէ , որովհետեւ պատկերացոյցին կարմիր գոյ-
 նը կը ցոլացնէ դուրս , առանց մաս մը ծծելու անկէ : Եթէ կանաչ
 ժապաւէն մը անցընէք պատկերացոյցին նոյն կարմիր գոյնին մէջէն՝ կա-
 նաչը բոլորովին սեւցած պիտի տեսնէք , որովհետեւ ժապաւէնը կարմիր
 գոյնը ծծող է և դուրս չաօր գայն . և որովհետեւ հոն ուրիշ գոյն կամ
 կանաչ չկայ որ դուրս ցոլացնէ , բնաւ գոյն չունենար ու կ'ըլլայ սեւ .
 վերջապէս դարմանալի չե՞ն սա գոյները . մարդիկ իրենց ընտարած , սի-
 րած գոյներն է որ կը ցուրազրեն , իրենց հաւնած գոյներով կը պճ-
 նուին . իսկ ծաղիկները և բոլոր գունաւոր առարկաները իրենց չհաւ-
 նած գոյնով կ'երեւան եւ հաւնածնին , ներս կ'առնեն , իրենց մասը կ'ը-
 նեն : Ճերմակ գոյնը՝ գոյներուն ամէնէն փայլունը ու գեղեցիկը՝ ձեր-
 մակ է , որովհետեւ գոյներուն և ոչ մէկը իրեն կը սեփականացնէ , այլ
 անոնց ամէնքն ալ կը ցոլացնէ . և անոնք ամէնքը մէկտեղ կը կազմեն
 ձերմակ գոյնը , կատարեալ տիպար մը բացարձակ անձնութեան .
 իր վրայ ցոլացած լոյսը ամբողջովին , իր եօթը չքնազ , գեղեցիկ գոյ-
 ներովը ետ կու տայ վերստին բնութեան , ճիշդ ինչպէս որ կատարեալ
 անձնութիւնները կը նուիրեն՝ բնութեան իրենց ընծայած բոլոր պարզեւնե-

րը՝ ուրիշներուն օգտին համար : Եւ այս պարզեւարաշիններն են որ կը փայլին , կը շողան անարատ ձերմակ լոյսով . ասոնք են որ՝ Աստուծոյ՝ արեւներուն Արեւին սպիտակափառ լոյսը կը ներկայացնեն այս խաւարչտին աշխարհին մէջ : Արդեօք ա՞յս պատճառով է որ երկինքի սուրբերը ձերմակներ հագած կը նկարագրուին , եւ մեղի կը պատմուի սպիտակափայլ հրեշտակներու վրայ :

Այս զարմանալի եւ հետաքրքրաշարժ եղեւթիւններուն առջեւ մտածում մը կ'ունենանք , զոր կարելի չէ անտես ընել . ի՞նչ զարմանալի յարաբերութիւններ կան բնութեան մէջ , որոնք իրենց ճշգրտութիւնովը ու զարմանալի արգիւնքներովը կ'ապշեցնեն մեզ : Ի՞նչ հիանալի կերպով յարմարած են իրերը մէկմէկու հետ եւ այդ յարմարութիւնը ի՞նչ հրաշքներ է որ կը գործէ : Տեսէ՛ք նախ եւ առաջ արեւի լոյս մըն է որ կայ , որ յետին աստիճան բազադրեալ գորութիւն մը կամ գործիչ մըն է . ունի անհամար բազկացուցիչ տարրեր եւ իր այլ եւ այլ մասերը տարբեր կը բեկբեկին տարբեր աստիճանով : Ասկէ զատ ունինք մարմիններուն հիւլէները ու մասնիկները , որոնք ամէնքն ալ կարողութիւն ունին այլ եւ այլ կերպերով ընտրելու եւ զատելու արեւի լոյսը եւ այս կերպով բնութեան եւ տրուեալի մէջ երեւցած գոյները արտադրելու : Ասիկա ընելու համար ասոնք ալ լոյսին չափ բազադրեալ եւ կնճռոտ կազմութիւն մը պէտք է ունենան . բայց ասոնցմէ զատ կայ նաեւ մարդկային աչքը եւ ուղեղը , այնպէս մը կազմակերպուած՝ որ կարող կ'ըլլայ այսպէս արտադրուած բազմատեսակ տպաւորութիւնները ընդունիլ եւ զանոնք ղանազանել : Հիմա աչքերնուս առջեւ բերնք այս երեք բազադրեալ կազմութիւնները , լոյսը որ չատ բազադրեալ գործիչ մըն է . մարմինները՝ որոնք պէտք է չատ բազադրեալ ըլլան ընտրողութիւն ընելու եւ բաժնելու համար լոյսի նման գործիչ մը . եւ մարդկային աչքը եւ ուղեղը որ նոյնպէս չատ բազադրեալ ընդունակ են այս կերպով արտադրուած տպաւորութիւնները ընդունելու : Հիմա հոս՝ հարցում մը կայ որ իսկոյն կը ներկայանայ մեր միտքին՝ որ կը մտածէ ամէն բանի վրայ : Ուրիշ՞ է այս երբեակ բազադրութիւնը : Ի՞նչպէս կարելի է երեւակայել որ այս երեք տարրեր ու կնճռոտ գործիչները իրարմէ բոլորովին անկախ՝ իրենց կնճռոտ գործողութիւններովը այնչափ յարմարին իրարու որ արտադրեն գոյներու հիանալի գեղեցկութիւնը : Արեւին լոյսը , մարմինները , աչքը , այն զարմանալի եւ կնճռալից գործարանը , եւ ուղեղը , զատ զատ արդէն հրաշալիքներ են , բայց հրաշալիքին հրաշալիքն են երբ կը մտածենք թէ՛ այս ամէնը՝ անկախաբար գործելով , իրարու այնպէս ճշգրտապէս կը յարմարին որ կարող կ'ընեն մեզ վայելելու գոյներու բոլոր գեղեցկութիւնը . հոս ունինք ոչ թէ միայն լոյսը հիանալի ինքն իրեն , այլ նաեւ ունինք լոյսը որ հրաշալի կերպով կը յարմարի գործելու համար աչքին վրայ :

Ունինք նաեւ մարմինները՝ որ ո՛րչափ ալ զարմանալի ըլլան ինքնին ,

ա՛լ աւելի զարմանալի կը գառնան՝ իրենց ներքին կազմութիւնովը յարմարելով զոյն չինելու ճերմակ լոյսէն և զայն փոխադրելու աչքին ցանցակերպին և անկէ ալ ուղեղին : Աշխարհիս ամէնէն անմիտը ըլլալու է մարդ՝ որ չիմանայ ասկէ թէ գերագոյն զօրութիւն մը և իմացականութիւն մը յարմարցուց ասոնք իրարու և ծրագիրը առաջունէ կար այդ Գերագոյն Միաքին մէջ :

Ուրիշ մտածում մըն ալ . տեսէք թէ այդ Գերագոյն էակը ինչ ահա . գին պատրաստութիւններ , ի՛նչ կնճառոտ , բազադրեալ մեքենականութիւններ հաստատելու է՝ միայն իրերը զոյնի փառքով հազուած տեսնելու հաճոյքը ու պերճանքը տալու համար մեղ : Ասկէ չհետեւի՛ր որ դիտաւարութիւն մը կայ մեղ դաստիարակելու համար որ՝ ուսուցիչք ևւ խմելիքք վեր բաներէ հաճոյք վայելենք :

Ահա՛ այն մեծ ճշմարտութիւնը, մեծ եղելութիւնը, որուն վրայ մեր ընթերցողներուն ուշագրութիւնը կը հրաւիրենք : Մարդս օժտուած է այն սեռակ ընդունակութիւններով՝ որոնցմով զարուգ է վայելել ոչ թէ միայն նիւթականապէս օգտակար եղած բաները , այլ օժտուած է շատ մը բարձրագոյն կարողութիւններով , որոնցմով կարելի կ'ըլլայ իրեն՝ վայելել նաեւ ինչ որ Գեղեցիկ է , ինչ որ ճշմարիտ է :

ԲՐՈՃ. ՅԱԿՈԲՈՍ Է. ՃԷՄԻՋԵԱՆ

ԺՊԻՏ

Ցանկայարոյց ու միամիտ
Բոյրի մը պէս տարտամօրէն
Հոգիս մէջ կ'իջնես նորէն,
Ո՛վ կանացի միածիք ժըպիտ :

Մռժ բաժակիդ զոգը վայրի
Հազար բոյրեր կ'եռան զինով .
Դուն ի՞նչ ունիս որ հասնումով
Թարթիչներուդ վրայ կ'այրի :

Անգաղանապահ վանկերդ ամէն
Սիրով, տենդով , ցաւով յըղի
Գիշերներուն՝ զաղտագողի
Փլտտակներդ կը պատմեն :

Ու ամպարիշտ խունկի մը պէս
Անուրջի մը պէս տարբէն,
Ալիքներդ զիս կ'ողողեն ,
Կարծես հոգի՛ս լացնել ուղես . . . :

Ահա գերի՛ն եմ հըպումիդ .
Սեւ աչքերուդ մռժը բոլոր
Զիս կը վարէ քայլամուր . . .
Ո՛ւր , ո՛ւր պսպէս , անե՛ղ ժըպիտ . . . :

Ռ. ՍԵՒԱԿ

Կոյս ծաղիկին թերթերը կը սարսափէին դողահար , առտուան սիւզին զովումէնէն սրտա-
լով : Յօղը իր մարդրկտ կայալիները բխրեղացուցեր էր անոր թաւիչէ թերթերուն վրայ , ու
զիշերուան շունչին սառնամանիքը՝ տակաւին իր երակները կ'ազնտէր ցրտին տենդով մը :

Արեւը , արթնցած իր հրավառ օրսանին ծոցը , հեռաւոր հորիզոններու զօտիէն , նուրբ
ու շղարշ մշուշին մէջէն մաղուելով , լոյսի իր զաղջ կաթիլները կը ցօղուէր անոր զլուխն
խլար ու իր մատղաշ թերթիկներուն շուրջը , տարտամ ստուերներ խաղցնելով առոյգ կանան-
չութիւնով օծուած տերեւուտքի մը խորհրդապահ կալարներուն տակ :

Օրուան հետ , արեւը զրկեց երկնակամարին զօտին , մշուշները հալածելով ու առտուան
ցօղը ձծելով իր հրուտ ճանաչներուն ոսկեման բթուկներովը :

Հիմա տաք՝ հոտանք մը կ'այրէր կուրծքը թարմատի ծաղիկին , կիզիչ ճառագայթներուն
տակ բոցավառ արեւին , որ կրակէ անձրեւ մը կը մաղէր իր վրայ :

Իր բովանդակ կուսագեղ փթծումին մէջ , հողին փափուկ ու արգասանդ կուրծքին մէջ
բացուած , ծաղիկը կոյս խռով մը ունեցաւ , և հրանուտ հեշտանք մը անցաւ իր երակնե-
րուն մէջէն :

Ան թօթուց իր տերեւները այդ անուշ՝ հեշտանքին տակ , ու արթնցաւ անծանօթ երազի
մը թմբիւրէն : Այդ զարթնումը արբեցուց զինքը հեշտալի գինովութիւնով մը , զոր շատ
անուշ ու գերբնական գտաւ :

Զգաց որ՝ նոր տենչանք մը կ'այրէր կուրծքը , տենդահար բարախումներ ու անդիմադ-
րելի խռով մը հոսեցնելով իր երակներուն մէջ :

Անսահման պսպակը զգաց ըմպելու այդ տենչանքին սարսափի անուշութիւնները , և
իր շրթները փնտռեց այն ակունքը , ուրիշ կը բղիւէր այդ երկնային հեշտանքը :

Միտը կը բարախէր անձկութիւնովը այդ անճառ ըղձանքին , և զգաց որ մօտի արու
ծաղիկին յանկուցիչ կոկոնն էր որ կը փնտռէր իր շրթները :

Հովը չէր խորշափեր սակայն իր տերեւներուն մէջ , իր անձկայրեաց շրթները մօ-
տեցնելու համար անոր երկնափծիմ կոկոնին :

«Ո՞ր էր որ փոթորիկ մը արմատախիլ ընէր զիս» , ըսաւ , ծաղիկը , կարօտակէզ՝ հպե-
լու ըղձանքովը այն թերթերուն՝ որոնք իր աչքը կը դիւթէին ու հողին կը վառէին , և ան-
ճառ վրդովանք մը կը հատցնէր զինքը այդ կարօտով :

Սպասեց , սպասեց , սպասեց : Եւ սակայն ոչ հաճոյատէր զեփիւռ մը շարժեց իր թեր-
թիկները՝ որպէս զի զլուխը ծռէր միւսին վրայ , ու արբենար ինք անոր ընծայած դիւծան-
քովը , ո՛չ ալ փոթորիկ մը փորձեց խաղալ անոր արմատին հետ :

Մինչեւ այդ ատեն իրեն անծանօթ այդ ցանկութիւնը , հիմա երբ յանկարծ փծներ էր իր
կուրծքին տակ , պատռելով իր կուսական հողիկին թմբիւրը ու վառելով հոն Սէրին Տենչան-
քը , կը վրդովէր զինքը անբացատրելի սարսուռներու մոլեկան գինովութիւնով մը , և կոյս
տազնապ մը կը ցնցէր զինքը մինչեւ արմատը :

Ձեկաւ , չեկա՛ւ սիրակարօտ հովը , մինչեւ ցորեկի ամէնէն հրեղէն պահը արեւին :

Դարու մը տեւողութիւնը եղաւ այդ կարօտի անհասանելիութեան անշարքաւ , ծաղիկին
կեանքին հոմար , որուն օրերը արդէն ա՛յնչափ կարճ էին :

Չոր խորշակ մը եկաւ յանկարծ իր թունաւոր լեզուներովը փայփայել ծաղիկին մարմինն
ու փրիօշ տերեւները :

Յնցուցաւ ծաղիկը այդ հրեղէն փայփայանքներուն խոյանքէն , և անգուժ հրկիզումի մը
մէջ , խանձած այրեցան իր թերթերն ալ ու կենսախայտ ցօղունը :

Դլխիկոր , զրկեց ծաղիկը իր վաղաժամ գերեզմանը , զոր իրեն ծնունդ տուող հողը բա-
ցաւ իր ծոցին մէջ , իր բունին տակ :

✽

Բոլոր Սէրի ու Վալեբի Տենչովը տոչորուող ու անոնց տիրանալ չկրցող այրի Հողիկներուն
պէս , զոր կեանքի չոր խորշակ մը շուտով կը խանձէ ու չբացնէ Հարաչոր :

ՆՆՈՎԻՐ ԱՐՄԷՆ

ՅԱՆԳԱՊԱՏՈՒՄ

« Բ Է Ա Լ Ի Ջ Մ » Ը

« ԼՈՅՍ », ի « ՇՐԱԶԵԱՅ » ԻՆ

Յանգակա՞ն խոնարհութեամբ

Լայն սրան մին էր , ընդարձակ բայց ցած ,
 և մէկ բանի հաս բազմոցներ հինցած
 Ու կոտրած փայտէ արոտներ կային ,
 Գրասեղան մ'ալ անգարդ ու խիստ հին ,
 Կը կազմէին կանն բոլոր սենեակին :
 Դուռը մէկը կար , ժամկոչի պէս լուրջ ,
 Որ բնա՛ւ երբեք չէր նայեր իր տուրջ . . .
 Կը խոկար խոճոր հորքի՛ մը նման . —
 Ո՛հ , ժամկոչները ասի չիմանան :

*

Անկիւնն էր նստեր Ալէֆո Փանոս ,
 Աչկով հրաշեայ , գերք երկու փարոս ,
 Իր հովն էր առած , Զասիկ Արգալիւր ,
Թուղբըս մոխիւրի . . . խոստմնապանն ընտիր ,
 Թելին ճակ ստած չաւքա մը երկար ,
 Անոր հով կայնած էր Դաւիթ Կուլան , —
 Ուռն աչերը կարծես քէ կու լան ,
 Ա՛յնքան յուզուած էր այդ տեսարանէն ,
 Գրագէտներու շէնդ « լոհնա » լէն . —
 Ուրիշ անկիւն մը , վառարանին հով ,
 Մէր նոր աշուղդ պզտիկ մօրուհով ,
 Կեցեր կը դիտէր դէմքը յարգանքով ,
 Դէմք բարձրացող հայելիին մէջ ,
 Իր սիրտը կ'առներ հազար ելեւէջ :
 Էտուարեան մտքը Դօլանին կամկար ,
 Կարծես քէ ունէր գլխուն մէջ . . . անգար ,
 Աւանդ Տերանցեան անկիւնն էր բազմած ,
 Օհան Ապսակցին կը դիտէր հեռուանց .
 Ծաղիկ Թաքուլեան՝ *հեռեկէն* ուսին ,
 Կ'երգէր ջրվէժ , կոյս նսպեաղն ու լուսին ,
 Եղուարդ Արփիեան աչ ձեռքը բացած ,
 Oh ! merci d'avance ! կը գոչէր անսանձ :
 Եղեամ Պաստեղեան՝ ակնոցը փրփին ,
 Կը բափառկոսէր առդին ու անդին ,
 Թուղթի կտորուանք կը լանձնէր . . . օղին :
 Վերէն ալ կախուած էր լոյս մը խոճոր ,
 Որ լոյս կ'անձրեւէր ձեզուցէն , խա՛չ որ :
 Լոյս մը կ'անձրեւէր , այս , ինչո՞ւ չէ ,

«Իմ սիրս ալ անա՛ շերեր կը կանչէ ,
Սէնպօլիսը եմ ես, սէնպօլիսը խրքի՛ն ,
Չեմ ուզեր որ դուք խնդամ իմ . . . փրփին :

*

Յանկարձ սուր ձայն մը , բարձր ու անսուր
Ջանգալի մը պէս գիւղի հեռուոր ,
— «Նիսը կ'սկսի՛ , լռեցէ՛ք տարօ» —
Ըսկաւ պռուտ խիստ արագ արագ :
Ամէնքն ալ ուռով դիտեցին զիրար ,
Եւ ինչպէս կ'իյնայ ծառերէն . . . զո՛ւր ,
Խօսքերն սկսան քափիկ ինքնիւրէն ,
Այդ գերահրա՛ւ , լո՛յս արթնցներէն :
Անասնոց մէջ իսկ ինչպէս է երէն ,
Յանախ իրարու սի՛րս է որ կ'երեն . . .
Քաղուր Ջասիկեան կը գոռար , կ'ընէր ,
— «Ինձի պէս տաղանդ ո՞վ է ունեցեր ,
Կրնա՞ք ինձի պէս ոն մը ունենալ ,
Ամբողջդ ալ ունի՛ք միտք մը . . . inégale» .
Անդիէն սակայն , որոտաց Դաւիթ ,
— «Ձե՛, չեղաւ , այստեղ բնա՛ւ չէ գաւիթ ,
Ուր այնքան կ'ընու շէտերով խօսի՛ք ,
Տեսէ՛ք ամէնքն ալ, լո՛ւն ու անխօսիկ ,
Ձեզ միտք կ'ընենք ո՛ն, մենք ալ մարդ եմք ,
Մե՛նք ալ կը գրենք, կը լինադատենք» .
— «Իրաւունք ունի , գոչեց Փոքրատենց ,
Պատուելի Ջասիկ , միեակ դուք չէ՛ք մեծ .
Մե՛նք ալ կը երթենք, կը կարդանք , կ'ըսենք ,
Դիտէր ալ ունի՛մ քիւով . . . տանք ինձ .
Ես հառապայքն եմ, լուսնակէն ք ղդած ,
Ես ցորեններուն հա՛սկն եմ հրախանձ ,
Ու հովիկն եմ ես քուրիցնէ գոյնով ,
Որ ձեր ուսերէն ղեր կ'ելլէ կիրճով :
— «Միտք դո՛ւք միայն մեծ է՛ք ո՞վ Տիար ,
Կ'որոհար մաղր Դօլանի՛ն էսուար ,
Ե՛ս ալ յօդուածներ ունի՛մ քիւրաւոր
Ջորքս կարգալու տեսն չունի՛ք որ ,
Դասէ՛ք տաղանդըս ա՛յնքան . . . փառասուր
Ձեզմ ալ բարձր եմ, ձիւրէն ունի՛մ հասու ,
Բանի որ երբեք չեմ հաւանիր մարդու» .
Ալէֆօ Փանոս ձայնով մը անեղ ,
Ըսկաւ իմէլ , լեզուին տալ տա հեղ .
— «Այսպէս մարդու տեղ չէ՞ք դներ ինձի ,
Ես որ համք մ'ունիմ, ո՛չ քէ պղծի՛ն ,
Այլ նոյն յանգերու , լեցուն խօսքերու ,
Ես որ տղայն կ'ընեցի հերու ,
Ու այգեկուրքը պիտի տալեմ արդ ,

Ձոր բերձուց պիտի երգէ ամէն մարդ .
 Ալիքեան առիւծը դուք չը նանչնա՛րք , դո՛ւք ,
 Միտէս կ'ըսեմ որ սա երեսին քո՛ւք . . . » :
 Ամէնքն ալ բաներ մը մտնուցին
 Դաւիթէն մինչեւ մեծ Ակիւսարցին ,
 Յետոյ կռիւր երբոր ստոսկացաւ ,
 Մարդիկն ըզգացին մէկ մէկ զլխացաւ . . .
 Երաւ Տեսնեան անկիւնէն մօտիկ ,
 — « Ամօ՛րք է , պտուաց , ինչո՞ւ կը կռուիք ,
 Մէկ մէկ հաննար էք դուք անչաւաբար ,
 Մէկը սուր կացին , միւսը սապար ,
 Մէկը կննադաս , միւսը կերբող ,
 Եւ ուրիշ մըն ալ համբաւներ . . . կերբող ,
 Մէկերնիդ կակաչ , միւսնիդ օճառ ,
 Պիտի հանչուիք որ մը անպատեհաւ ,
 Մէկերնիդ սունկ էք , ուրիշ մը գուսան ,
 Մէկերնիդ աւուղ որ կ'երգէ կուսան . . . :
 Իրարու զլխու կապեցէք արօտ ,
 Ամէնքն ալ մէկ մէկ ծաղիկ էք խորտ ,
 Որ կը զարդարէք գրական արօտ . . . :
 Երբ մէկ մէկ յօդուած ստացաւ երաւ
 Ձեռնէն այս մարդոց , որք երաւ երաւ ,
 Դուրս կը խուժէին սեներակէն մեծկալ ,
 Ձայն մըն էր բրդաւ իրեն մէկ . . . կայծակ .
 Գրականութեան Ձախտան անկար ,
 Իրենց մօտեցեր ու կը հեծկրլար .
 Փռնը մըն էր բռնած մէկ ձեռքը ուժգին ,
 Իսկ միւս ձեռքն ալ ալ սարած էր կուրծքին .
 — « Դրա՛մ տուէ՛ք ինձ , որք մըն եմ խեղճուկ ,
 Դրացէ՛ք պզտիկ հասակիս կարեւուկ ,
 Թերք մը կը սպեմ , ընտանիք մըն եմք ,
 Փարս չունիմք որ ցատկեմք ու պարեմք ,
 Երբ հայրըս ողջ էր տունը պտուղ կար ,
 Եւ օճախիս ալ մի՛շտ կը շողողար . . . »
 — « Դո՛ւք աղէկ , բաւ Եղուարդ Արփիեան ,
 Ինչո՞ւ չես ծախեր քերթդ հոտեւան » :
 — « Բայց ինչպէ՞ս ծախեմ , պատասխանեց ան ,
 Պապայիս գործը կ'ուզեմ յախտեան
 Շարունակել ես . դրա՛մ տուէ՛ք որ
 Յօդուածներ գրեմ անէի աղօլոր ,
 Բաւկա պարսապ է եւ միտքս ամուլ ,
 Պիտի աշխատիմ ու գրեմ անդուլ :

*

Երբ մէկ մէկ նուր տալով չուեցին ,
 Տեսան որ դրան առջեւ , առանձին ,
 Ձեռքը քուրք մտած , սիւնին ճակ կնեայ ,
 Բան մը կը գրէ շուրջ շուրջ

ՄԲԱ. 26 Ա. 6

ՍԻՐՈՅ ԲՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ

2.

Նոյն բանը կրնայ ըսուիլ խառնուածքի մասին , անձնուր մարդ կը նախընտրէ իրեն հակադիր մէկը , և իր նախընտրութիւնը միշտ համեմատական է իր սեփական խառնուածքին ազդեցութեան : Ձեռք ու գլուխը ըսել թէ այս ինչ բանի մը մէջ կատարեալ մարդ մը կը սիրէ հակառակ անկատարութիւնները . բայց աւելի դիւրին կը հանդուրժէ անոնց , որչափ ուրիշներ չպիտի հանդուրժէին , որովհետեւ աղաք այդ յատկութիւններուն մէջ երաշխաւորութիւն մը կը գտնեն ընդդէմ աւելի մեծ անկատարութեան մը : Օրինակի համար , շատ ճերմակ մարդ մը չպիտի խորշի ձիթագոյն անձէ մը . բայց թխագոյնի մը հիւսնալիւսըն գեղեցիկ կը թուի չողողուն կերպով սպիտակ գոյն ունեցող մը : Բացառիկ պարագաներ կը պատահին , ուր էրիկ մարդ մը կրնայ սիրահարուիլ ճշմարտապէս տգեղ կնոջ մը , բայց նորէն սեւերու համաձայնութեան մեր օրէնքին համեմատ՝ երբ կնոջ թերութիւններուն և ֆիզիքական անկանոնութիւններուն ամբողջութիւնը ճիշդ հակառակն է և հետեւաբար էրիկ մարդուն թերութիւններուն և անկանոնութիւններուն ուղղիչը , այն ատեն տարիանքը արտակարգ աստիճանի մը կը հասնի ընդհանրապէս :

Այդ ամէնուն մէջ , առանց մտաբերելու , անհատը գերագոյն հրամանի մը կը հնազանդի , այն է մարդկային ցեղին կողմէ տրուած հրամանին . նոյն պատճառով է որ անհատը կարեւորութիւն կ'ընծայէ այն տեսակ բաներու , որոնց նկատմամբ կրնար և պէտք էր քանադարձ ըլլալ : — Ոչինչ այնչափ եղական է , որչափ խորունկ ու անգիտակից այն լրջութիւնը , որով առաջին անգամ զիրար տեսնող և տարբեր սեռի պատկանող երկու երիտասարդներ կը դիտեն մէկըմէկ , հետազօտիչ ու թափանցող նայուածք մը կը ձգեն իրարու վրայ , փոխադարձաբար մանրախոյզ քննութենէ մը անցընելով իրենց դիմագիծերը և մարմինին բոլոր մասերը : Այդ հետազօտութիւնը , այդ զննութիւնը նոյն իսկ խոկումն է մարդկային ցեղին ոգիին՝ իրենց ստեղծագործելիք գաւկին վրայ , և միաւորումը կազմական տարրերուն : Այդ խոկումին արդիւնքը պիտի ճշդէ իրենց փոխադարձ հակումին և տենչանքներուն աստիճանը : Որոշ աստիճանի մը հասնելէն ետքը , այդ առաջին շարժումը կրնայ կասիլ յանկարծ՝ մինչև այն ատեն աննշմար մնացած մանրամասնութեան մը երեւան հանուելով : Այսպէս՝ մարդկային ազգին ոգին կը խոխոյ ապագայ սերունդին վրայ [1] , և անոր կազմութեան մեծապէս կը նպաստէ Բուրխովս , որ կը խորհի , կը ճարտարամիտի և կը գործէ անդադար : Ներկայ և ապագայ մարդկութեան մեծ շահերուն հանդէպ վաղանցիկ անհատներու նպատաւորումը շատ քիչ նշանակութիւն ունի .

[1] Որչափ կրկնեցիք այս քննութիւն վճիռը , Շօքենհուտէրս — Խմբ. Ծան.

չատուածը միշտ պատրաստ է զանոնք զոհելու տնդթօրէն : Մարդկային ցեղին ոգին այնպէս կրնայ համեմատուիլ անհատներու հետ, ինչպէս անձան մը՝ մահկանացուներու հետ, իր շահերը, բազմաթիւ մարդոց շահերուն, կրնան բազմաթիւ անհատներու զրուիլ անհոտին ու հունաւորին հետ : Այդ ոգին, գիտնալով որ անհատական բարիքի մը կամ չարիքի մը չորջր զարծող բաներէ տուիլ բարձր գործեր կը վարէ, գերազանց անողորմութիւնով կ'առաջնորդէ զանոնք պատերազմի ժխտին, գործերու իրարանցումին, ժանտախտի արհաւիրքներուն մէջէն : Նոյն իսկ մարդիկը կը հետապնդէ մենտալտանին խորը :

Ինչպէս վերը Եսայիք, սիրոյ ու ժգնութիւնը այնչափ կ'աւելնայ՝ որչափ անհատականանայ : Այդ բանը ապացուցինք, բնական թէ երկու անհատներու ֆիզիքական կազմութիւնը կրնայ այնպէս մը ըլլալ որ, մարդկային ցեղին տրպարը բարեօքելու և իր բովանդակ անխառնութիւնը տալու համար անոր, այդ անհատներէն մէկը պէտք է միւսին լրացուցիչը դնենայ : Այն ատեն միտադարձ և ալլամերժ տենչանք մը կ'աւելնէ զանոնք, այդ տենչանքը ազնիւ ու բարձր նկարագիր մը կը ստանայ իսկոյն, սա միակ պատճառով որ՝ մէկ առարկայի չորջր կը դառնայ և միեւնոյն ատեն կը ներկայացէ մարդկային ցեղին մասնաւոր մէկ պաշտօնը, Ներհակ պատճառաբանութիւնով մը, զուտ սիրային բնավէր զուհիւ լնալի մըն է, միակ անհատի ուղղուած չըլլալուն, այլ ամէնուն, մասնաւոր որ կը ձգտի մարդկային ցեղը պահպանել քանակի տեսակէտով միայն, առանց հոգ տանելու որակին : Երբ սէրը միակ էակի մը վրայ կեդրոնանայ, այն ատեն վերին ստալիճանի ստակութիւն մը կը ստանայ և բուռն տարիանք մը կը դառնայ, և եթէ երբեք գոհացում չգտնէ՝ աշխարհի և կեանքի բոլոր բարիքները կը կորսնցնեն իրենց արժէքը : Այն տեսակ ուժգին կիրք մը կը դառնայ որ՝ ոչ մէկ բան կրնայ մրցիլ անոր հետ որ և է զոհողութեան առջեւ չընկրկիր ան և կրնայ վերջնապէս յիմարութեան կամ ինքնասպանութեան յանգիլ : Նուազ տկներ ևն այդ տեսակ ծայրայեղ սիրոյ մը անգիտակից պատճառները, որոնք տարբեր ըլլալու ևն վերը առաջ բերուած կարգ մը պատճառներէն : Պէտք է ընդունիլ որ՝ այդ տեսակ տարիանքի մը մէջ խնդիրը չի դառնար ֆիզիքական յարմարութեան վրայ միայն, այլ և մարդուն կամքը և կնոջ իմացականութիւնը մասնաւորապէս կը պատշաճին իրարու, որով միայն կրնան ծնունդ տալ բոլորովին նախասահմանուած էակի մը մարդկային ցեղին ոգին իրենց պատակէտ ունի այդ էակին կեանքը, այն տեսակ թաքուն պատճառներով, որոնք մեղի մատչելի չեն և մարդուն էութեան մէջ թաղուած կը մնան : Ուրիշ խօսքով, ասորեւ կամք հոս կ'ուղէ առարկայանալ ճշդիւ տահմանուած անհատի մը մէջ, որ այդ հօր ու մօր միաւորութիւնով կրնայ աշխարհ գալ, կամքին այդ բնազանցական տենչանքը

նախապէս էականութեւ չարքին մէջ գործունէութեան ուրիշ շրջանակ չունի բացի ազատագայ ծնողքներու սիրտերէն . այդ միջումին չնորհիւ կ'երևակայեն թէ ինքզինքնուն համար միայն կը տենչան , ինչ որ զուտ ընազանցական նպատակ մը ունի , այսինքն իրապէս դոյութիւն ունեցող բաներու շրջանակէն դուրս : Ուրեմն բոլոր էականութեւ սկզբնական սղլրութեն կը պոսթկայ ազատագայ էակ մը ունենալու բզձանքը , որ տալիսին կը սպասէ՝ կեանք ստանալու համար , և այդ բզձանքը կը յայտնուի իրականութեան մէջ՝ ազատագայ ծնողքներու կողմէ իրարու նկատմամբ զգացուած բարձր ու այլամերժ տարրիանքով . մնաց որ՝ անշուղտական պատրանքին չնորհիւ է որ սիրահար մը կը մղուի աշխարհային բոլոր բարիքները դոնելու՝ իր սիրած կնոջ միանալու համար , — թէ և այդ կինը ուրիշ կնոջ մը պարզեւածէն տարբեր բան մը չկարենայ տալ : Այդ միակ նպատակին կը հետամտին . ապացոյցն ալ սա է որ այդ վսեմ տարրիանքը , միւս կիրքերուն պէս կը մարի վայելքէն ետքը , մեծ ազդութիւն պատճառելով ենթականերուն : Տարրիանքը կը ցնդի նաեւ , երբ կինը ամուլ բլլալուն [ինչ որ կրնայ առաջ դալ կաղմական 19 տեսակ թերութիւններէ , չի ֆլանտի ըսածին նայելով] , ընազանցական նպատակը անհետի . այսպէս՝ միլիոնաւոր սերմեր կը վիճանան ամէն օր , որոնց մէջ , սակայն , կեանքի ընազանցական միեւնոյն սկզբունքն է որ կը ձգտի զէպի էակը : Այդ բանին մէջ միակ սփոխանք մը եթէ կայ , սա է թէ՝ ապրելու կամքը անշրպեւտին մէջ իր արամագրութեան տակ ունի անհունը , ժամանակը և նիւթը , և դարձի անսպառելի առիթ մը բաց է իր առջեւ . . .

Սիրոյ տենչանքը ամէն ժամանակի բանաստեղծներ ջանացած են բացատրել հաղարումէկ ձեւերով , առանց սպառելու այդ նիւթը , որուն հետ չի կրնար մրցիլ ուրիշ որ և է նիւթ : Այդ տենչանքը կնոջ մը վայելումին հետ կը զօդէ անհուն երանութեան մը դազախարը , և անբացատրելի վիշտ մը՝ երբ չկարենայ ձեռք անցընել զանի : — Սիրոյ այդ տենչանքը և այդ վիշտը չեն կրնար իրր նախապատճառ ունենալ վազանցիկ էակի մը պէտքերը . այդ տենչանքը հաւաչն է մարդկային ցեղի ոգիին , որ իր նպատակը իրագործելու համար , առոր մէջ եզտական առիթ մը կը գտնէ կամ կը կորսնցնէ , և որ խոր հեծիւններ կ'արծակէ : Մարդկային ցեղը միայն անվարձան է , կարող՝ դոնացումներ ձեռք բերելու և անհուն վիշտեր ունենալու : Բայց այդ վիշտերը բանառած կը մնան մահկանացուի մը նեղ լանջքին տակ . ուրեմն զարմանալի չէ որ այդ լանջքը պոսթկայ և չկարենայ որ և է բացատրութիւն գտնել , զինքը պարտադր ճշտանքի և անսահման վիշտի նախազգացումը նկարագրելու համար : Ան է որ կը կաղմէ նիւթը բարձր սեւի պատկանող սիրային բանաստեղծութեան , վսեմ փոխաբերութիւններու , որոնք երկրային բաներէն վեր կը սաւառնին : Ան է որ կը

ներչնէր Բէթրարքը , ան է որ կ'ողև որէր Ս. Բրէժները , Վերթէրները
և Ժաքօրօ Օրթիսները . առանց անոր՝ անիմանալի ու անբացատրելի
պիտի մնային անոնք : Այն անհուն արժէքը զոր սիրահարները կ'ընծա-
յեն իրարու , չի կրնար հանգչիլ մտաւորական չքնաղ ձիրքերու ,
առարկայական կամ իրական յատկութիւններու վրայ , սա պարզ
պատճառով որ սիրահարները ճշգրտօրէն չեն ճանչնար զիրար . այդպէս
էր նաև Բէթրարքի պարագան : Միայն մարդկային ցեղի սղին է որ մէկ
տկնարկով կրնայ տեսնել թէ՝ սիրահարները ի՞նչ արժէք ունին իրեն
համար և ի՞նչպէս կրնան ծառայել իր նպատակակէտին : Այսպէս՝ մեծ
տարփանքները առաջին նայուածքէն կը ծնին ընդհանրապէս .

Մաք մը որ չէ սիրած առաջին նայուածով
չեմարիս սեր կը գտնեմ անոր եով :

ԵԷՅՔՍԲԻՐ. — As You Like it, III, 5.

. . . Երբ պաշտելիին կ'որուսար , մրցակիցի մը կամ մահուան երե-
սէն , բոլոր վիշտերէն աւելի սաստիկ ցաւ կ'ազդէ տարփառեղիչի սի-
րահարին , պատճառը սա է որ այդ վիշտը վերանցական է և միայն
անհատը չհարուածել , այլ նաև մարդկային ցեղին կեանքը , որուն
մասնաւոր կամքը իրագործելու պաշտօն ունէր : Ատոր համար է որ
նախանձը աշխարհի վայրագ տուայտանքներով տոգորուած է , և իր սի-
րականէն հրաժարուածը զոհողութիւններուն ամէնէն մեծն է : Հերոս մը
պիտի ամենար գտնիկ ողբեր արձակելու , բայց սիրոյ ողբեր արձակե-
լու չպիտի քաշուէր , որովհետև վերջին պարագային՝ ո՛չ թէ ինքը ,
այլ մարդկային ցեղն է որ կը հեծեծէ : Քաղաքօտի մէկ թատերախա-
ղին երկրորդ արարուածին մէջ տեսարան մը կայ Զէնօպի ու Տէ-
սիօսի միջև , ուր այս վերջինը կ'ըսէ .

Երէ իրա՛ւ գիտ կը սիրես ,
Բի՛ւր յաղթանակ կը գտնեմ ես
Ու խոյս կու տամ քրեմալիս :

ԶԱՐԵԶ ԵԷՍՅԷ

ԱՐԺՈՒՐ ԵՈՐԻՆԱՅՈՒԷՐ-Ի

Մեր բազմաթիւ աշխատակիցներէն ստաց-
ուած գեղեցիկ յօդուածներով գրական շփոթ
փունջ մը եւ բացառիկ փայլուն թիւ մը հրա-
սարակելու նպատակով “Մասիս,,ի յացորդ
թիւը պիտի հրատարակենք 16 փետրվար շա-
բաթ օրը : “Մասիս,,ի կրկին ծաւալով ու ճոխ
բովանդակութիւնով հրապուրիչ հասոյ մը
պիտի կազմէ այդ թիւը, որմէ վստահ ենք թէ
մեծապէս գոհ պիտի մնան ընթերցողները :

ԳԻՒՂԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ*

Պ Ա Ս Ռ Ս Ի Ը

Դիշեր էր, ձմեռ. ձիւնը կ'իջնէր պտուղեկով մութ միջոցին մէջ ու կը դիզուէր տնակներուն վրայ, փողոցներուն մէջ, սարերու կողմն իվեր։ Այդ քանի՜ օր է որ կը ձիւնէր արդէն, առտուընէ մինչեւ իրիկուն, յետոյ գիշերը, յետոյ դարձեալ առտուն. ան կ'իջնէր, կ'իջնէր լեռներուն անցքերը փակելով, հողորդակցութիւնները անկարելի դարձնելով։ Շինականները ամէնքն ալ թոնիրներուն բոլորտիքն էին քաշուեր։ Թոնիրները առտու իրիկուն կը մկային։ Օրերէ իվեր գայլերը կատաղի դարձած էին ձմրան սառած կռուներէն։ Խումբերով անոնք կը փռնային գիւղակին եզերքը, երբեմն մինչև իսկ տնակներուն ետին ու կ'ոռնային։ Այն այդ ոռնումները բազմամիւ գայլերուն, երբ գիշեր կ'ըլլար...։ Անոնք կը տարածուէին, կ'երկարածգուէին լեռնային գիւղակին վրայ, գիշերային խոր լռութեան մէջ ու շինականները աւելի կը վախնային, աւելի կը սեղմուէին իրարու։

Մարմանց պատու թամամը ժամերէ իվեր նստած էր այդ գիշերը թոնրատունը մէջ։ Ան խոր վիշտի մէջ էր ու յանախ իր նայուածքը կը յատէր իր հիւանդ հարսին վրայ։ Շաբաթներէ իվեր պառկած էր իր հարսը, բայց երբեք աղէկ չէր ըլլար։ Օր մը ըսած էր թէ ուժ չունի ալ, ոտքերը կը կ'թոթին ու պառկած էր. անկէ իվեր օրերը կ'անցնէին ու երթալով կը վատուէր։ Վերջին երկու օրերը հիւանդութիւնը սաստկացած էր ու յանախ կը գառանցէր։

* Հրասարակելու առիթով այս պատկերացից պատմութիւնը գաւառացի նորանաս Գրդի մը, հանդիմով կը դիտենք իր գրական յաջողութիւնը։ Գաւառացի նորահաս գրողներէ ստացուած յօդուածներուն մէջէն հրասարակելով բացառաբար յաջող այս գրութիւնը, որ առաջին իսկ գրական փորձն է հեղինակին, աւելցնենք թէ՛ գրողը գաւառական գրականութեան համարիս ուղիին մէջ կ'ըստ է դնել ինքզինքն, ընդգրկելով գրական ուղիւն մը, որո՞ւն մշակումն ունի առաւելապէս պէտք է նուիրուի գաւառի մէջ ամէն անոն՝ որ գրիչ շարժելու սերը ունի։ Տոնիկ բարեկեցութեամբ, բնական դրամներու շուկայով այս սեռին մէջ է որ կը կայանայ ապագան գաւառական գրականութեան եւ հո՞ն միայն կարելի է փնտել մեծագոյն յաջողութիւնը եւ արժանիքի պակասը, իր լայնօրէն հեղեղի հմայիչ դաշտերով արգասնող այն գրականութիւնը, զոր մասով մը գեղեցկօրէն մշակած են Թլկասիցիներ եւ ուրիշներ։

Թոնիրը պաղ, մարած էր. այդ օրը առտուընէ իվեր չէին վառած։ Պատէն կախուած ձիւնալը տոնին լոյս մը կը ցանէր ու աղտոյ կերպով կը լուսաւորէր մութն սեւցած պատերը, հիւանդին անկողինը ու բուխերիկին սեւ բերանը. իսկ անկիւններուն մէջ, աւելի անդին մութը սոսկալի կերպով կը տարածուէր, անանկ որ ոչ ոք գիտէր թէ պա՞տն էր որ դեռ կ'երկարէր թէ թոնրատունը մութն մէջ։

—Կ'ըսեն, սկսաւ ծերուկ Գապէն հետաքրքրաբար գետինը նայելով, զուխը կախ, կ'ըսեն այս տարին ձմեռը խիստ պիտի ըլլայ... Դեռին եղերքներուն՝ մոշենիները կանուխէն թռուեցան, անոր համար էր, չէ՞. . . Եթէ ոչ այս տարին ինչո՞ւ կ'ոռնակները այնքան կանուխ դարձան։

Երկուքն ալ նստեր էին իրարու դիմաց, թոնիրին շուրջը։ Ծերուկ Գապէն ոտքերը թոնիրը երկարած դանդաղօրէն կը խօսէր։ Սպիտակ մօրուք ունէր և թաղիքայ պակասակ ահալին զգալի մը՝ որ կոնածեւ կ'իջնէր զուխին վրայ։ Անոր աչ ոտքը կաղ էր և դժուարաւ կը բալէր։ Պառաւ թամամը լռեց, պատասխան չտուաւ. շատ ետքը միայն հարցուց։

—Գոռնկնե՞րը ըսիր։

—Այո կ'ոռնակները։

Երկուքն ալ լռեցին. դուրսը ձիւնը վերստին կու գար։

—Էլի ձիւնը կու գայ...։ Աստուած ողորմի անտէր ճամբորդներուն, ի՞նչ կ'ընեն արդեօք հիմա։

Պառաւ թամամը զուխը վեր ուղղեց. միտած գերանները կը տեսնուէին, բայց ձեղունը այնքան բարձր էր որ մարդ զուրի մը մէջ կը կարծէր ինքզինքը։

Լամբ. Ծամ.

—Մի՛ լար , մի՛ լար , մրմնջեց ձերուկ Գապէն , տեսնելով որ կու լայ , Աստուած ողորմած է , մի՛ լար :

Երբուկ Գապէի անտակ Թուեցաւ Թէ՛ պուռա Թամամը դարիւղ նամբորդները յիշեց ու անոր համար լացաւ : Բայց պատաւ Թամամը շարունակեց իր լացը :

—Երանասա , երանասա , կը մրմնջէր . ո՞ւր մնաց իր նամբէն հիմա , ան խեղճ էր , ան վատ աղայ չէր :

Նոյն պահուն հիւանդը վերմակը նետեց : Երեսի տենդը սաստիկ էր :

—Դաժկէ , կը մոխ , ջան , ծածկէ , մրմնջումաց պատաւ Թամամը իր լացին մէջէն , զլուխը ան կողմը ուղղած , էլի խիտ ցուրտ է :

Բայց երեսի հիւանդը չլսեց . ան շարունակեց բացը Թողու իր հալած , տվոյն բազուկները : Պատաւ Թամամը ոտքի ելաւ ու ծածկեց հիւանդը մօտելով . ձիւկալին լոյսով կը զմագրուէր պատին վրայ իր խիտ կարծ հասակը , իր լայնածաւալ լաջակը՝ որ մինչեւ յոնրբը կը ծածկէր և որ անհամեմատ կերպով տնդին երեւոյթ մը կու տար զլուխին : Պատաւ Թամամը մոռնին մէջ մտաւ ցաւ ու դուռը բացաւ : Զիւնը կու գար . դռանը առաջըն ձիւնը դիզուած էր և կը կը սպառնար անակը լեցնելու : Մո՛ւժ . . .

—Զիւնը ներս կու գայ , պոռաց ձերուկ Գապէ , կը մտնէ , զոցէ :

Երբուկ Գապէի աչուքները կը փայլէին : Պատաւ Թամամը զոցեց դուռը ու եկաւ նստաւ տեղը :

—Ա՛խ խեղճ Միլունար . . . այս տեսակ օր մըն էր որ մեռաւ Թորատապէ , ձիւնը կու գար , մռն գիշեր էր , մրմնջեց Թամամը :

Ու յիշեց երէկուան այցը դէպի գերեզմանատուն . կիրակնօրու էր և ան գացած էր Սալբիի գերեզմանին վրայ աղօթելու : Գոժաւորաւ ան կրցած էր հողէ խնկամանը անոր հողակոյտին վրայ դնել : Զմեռը ո՛ր աստիճան սաստիկ եղած էր . ձիւնը ամէն կողմ հաւասար ծածկած էր և խոնկին կապտորակ մուխը նուրբ ու երկայն բարձրացած էր լուռձեան մէջ : Սալբիին հողակոյտը զրեւծէ բոլորովին անյայտ էր եղած համաաւարած ձիւնին տակ . Թմենիի ծառին շնորհիւ ան գտած էր : Ու յիշեց Սալբին , անոր Թուխ դէմքը , պնդուն սև աչքերը և բոլորիկ ոտ-

քերը՝ օրոնցմով կը վազէր ասրեկից երախաներուն հետ :

—Ի՞նչքան լուռ էր , մտածեց , ու անմիջապէս իր միտքը բան մը լուսաւորեց : Իրեն անտակ Թուեցաւ Թէ իր հարսը հիւանդ է , օրովհետեւ Սալբին մեռաւ , Թէ անոր վիշտին չէր կրցած տոկալ :

—Ա՛հ , խեղճ հարս ջան , զո՞ւսա՛ր է երախտային մահը գար ծայցուցեր ևս , զօր մեծցուցեր ևս . . . Երբ իմ Մկրտ մեռաւ , ևս այն տունն նոր հարս էի , ճիշդ քեզի պէս , իմ առջինեկս էր և այնքան լացի . . .

Բայց չուզեց բարձրածայն խօսիլ , վախնալով որ իր հարսը կը լսէ : Իրեն անտակ կու գար Թէ՛ իր հարսը անկողինին մէջ մտիկ կ'ընէ իրեն , և երբ լսէ , իր հիւանդութիւնը աւելի կը սաստկանայ :

—Բնացիր , բնացիր , զիշերը սառաւցած է . . . մրմնջումաց ձերուկ Գապէ ու անյայտ եղաւ վերմակին տակ :

Թանքատունը լուռ էր , ձիւկալը կը պղպլատ դնէ . աղօս լոյսին մէջ , որ տակաւ աւելի վերերը կը մօնար , պոտերը կը բարձրանային , անշարժ , լուռ , բան մը մտիկ ընողի երեւոյթով , և այնքան բարձր էին որ , անտակ կիտովին զետնին մէջ փորուած ըլլալուն , առիթը խիտ վերը կ'երեւար , և մտրդ կը կարծէր Թէ՛ աշխարհէն , լոյսէն բոլորովին զրկուած է ինք , Դուրսը , զայլերը կը կաղկանձէին , և մտրդ կը լսէր անոնց կաղկանձիւնները խիտ խորունկէն : Նոյն պահուն հիւանդը սկսաւ զառանցել . «Դանիէլ ջան , խեղճ եմ . . . Սալբին , ա՛խ , Սալբին . . . » Գիշեր էր և միշտ այդ տոնեններն էր որ հիւանդին տենդը կը սաստկանար : Պատաւ Թամամը սկսաւ վախնալ :

—Հարս ջան , հարս ջան , արձնցիր :

Հիւանդին աչքերը բաց էին , սրկալի կերպով կը փայլէին տենդէն , բայց ան կը խօսէր և ի՞նչ զարհուրելի բառեր :

—Հարս ջան , դարդդ ի՞նչ է . . . խեղճ եմ . . .

Հիւանդը լսեց այս անգամ : Պատաւ Թամամը զլուխը ծռեց Թանիքին մօտէն վրայ ու հին , հին ընտանեկան յիշատակներ սկսան երեւիլ իր միտքին առջև : Ահա Շուշիկը . և անոր առջեւը պատկերացաւ Շուշիկի երկար հասակը , աչ աչքը որ կիտով խիտած

էր ծաղիկի հիւանդութենէն և որ իր դէմքին մասնաւոր նշանակութիւն մը կու տար: Հարսնիքի օրն էր . երկու ին ալ նոյն օրը հարս կ'ըլլային . Տէր Արքանաճը երկուքն ալ մէկտեղ և երկեքի առաջնորդած էր ու մէկտեղ պատկած : — «Մինչև ցիտն հնազանդես» . . . Սն աճցած էր պատասխանելու , լուս էր , բայց ներքնագէտ ինչքան համամիտ էր հարցումին . . . Յետոյ անոնք լաւ քարեկաններ էին դարձեր . ամէն օր աղբերաղբիւն իրար կը տեսնէին անպատճառ : Անոնք իրարու միջև զազանիք չունէին : — «Շուշիկ ջան , պէտք է որ խնամիք ըլլանք մենք» : Եւ Շուշիկ ամէն անգամ խօսք կու տար Նշխունը հարս տալու Թամամ բաշին : Պատու Թամամը պահ մը շուրջը նայեցաւ , մոծին մէջ , բան մը տեսնելու համար կարծես , յետոյ գլուխը ծռեց ու վերադարձ խորնեցաւ : Դանիէլի հարսնիքի նախիրիկունն էր . որչա՛փ շատ պատրաստութիւններ էր տեսած . մեղր , կարագ , հալիւրներով ձու , կարագով զինի , ամէն , ամէն բան պատրաստ էր . ծանիրը առտունէ իմիր կը վտէր հաց պատրաստելու , դասը առաջը կամսաներու մէջ հարսանեկան տխրամահամ փիշաւները կ'եփէին . . . հրաւիրեալները դուրսը . տանը մէջ , ներսը , կտուրները կը վխտային և ո՛րչա՛փ շատ էին : Ինք որչա՛փ ուրախ էր , կը մանէր , կ'ելէր , վերադառնալով կը մանէր , ամէնուն մէյմէկ քաղցր խօսք ուղղելով . . . : Զոռնան զնգզնգաց վերջապէս . պատու Թամամը դուռն էր և կ'ընդունէր հարսն ու փեսան . — «Հրամանեցէք , մայրը ձեզի մատաղ , ո՛վ հարս ու փեսայ , հրամանեցէք հարսնեւորներ , զխառ վրայ տեղ ունիք » : Հարսնեւորները կ'երգէին . «Փեսային մայր , ներսի գոնէն դուրս եկուր » : Եւ վերջապէս հարսին մայր Շուշիկը , ան կու լար հարսին ձեռքն բռնած , ինչ դարդոտ խօսքեր կ'ըսէր ան . — «Զուաւ կը բուկդ է ալ , Թամամ ջան , դուն պէտք է զայն խնամես , վերը Աստուած վարը դուն , ջանէլ է , դուն պէտք է ըլլաս անոր հայրն ու մայրն» : Ինք կը ջանար մխիթարել , բայց Շուշիկը որչա՛փ շատ կու լար : Պատու Թամամը կեցաւ . հիւանդը վերադառնալով զատանցէր : Տեսիլին մէջ միտակ էր ինք և սկսաւ սարսուռ : Պաղ բրդինք մը շարունեցաւ ճակատին վրայ :

— Ես եմ , քու կեսուրդ եմ . հարս ջան .

Ալ չխտեցաւ . հիւանդը կը զատանցէր . «Փեղեցիկ էր զգեստը , հագայ , Դանիէլ ջան . . . և դուն այնքան ուրախացար . . . կ'ըսեմ Սալբին . . . » ու լռեց : Խոր լռութիւնը վերադառնալով տիրեց . ծննդատանը մէջ . երկար ատեն անցաւ : Պատու Թամամը բռնեց չէր զար ու հին ընտանեկան յիշատակներ միշտ կը ծնէին իր միտքին մէջ : Ան յիշեց առաջին օրերը երբ դեռ նոր հարս էր Նշխունը : Ինչքան լաւ , համեստ , հնազանդ հարս էր , յարգանքով ստրկի կ'ելլէր ու բարեւ կը բռնէր ամէն անգամ որ առջեւէն անցնէր . — «Թամամ բաշի , կ'ըսէին զբացիները , փառք տուր Աստուծոյ , խիտ լաւ է հարսդ» : Ինք որչա՛փ կ'ուրախանար այս խօսքերը լսելով , հապա երբ Սալբին ծնաւ . . . բայց դժբաղդ եղաւ խեղճ Նշխունը : Մանաւանդ օր էր , ան յիշեց այդ օրը , երբ Դանիէլը օտար քաղաք պանդխտելու կ'երթար , որչա՛փ լացաւ Նշխունը . ան թէ և լաշակին տակէն չէր համարձակեր իմացնել , բայց ինք ամէնը հասկցաւ : Իրիկուն եղաւ . Նշխունը թեւերը ծալած , վիզը ծռւ էր օձախին տալը . ան բնաւ չէր շարժեր , տունը լուս էր , մեռելային լուծիւնով . իրեն այնպէս եկաւ թէ՛ Նշխունը կու լար , ինքն ալ լացաւ , և այդ պահուն ամէնէն աւելի խստօրէն զգաց Դանիէլի մեկնումովը տանը անարեւ կեանքը : — «Էլի հաց կեր , հարս ջան» . Նշխունը գլուխը դարձուց ու լացաւ այս անգամ յայտնապէս . ա՛խ , ինք որչա՛փ հապա լացաւ : Աստու եղաւ , Նշխունը հիւանդ էր . — «Էլի զա՛րդ ունիս , հարս ջան , ի՜նչ է դարդդ , պատմէ , խեղճ եմ» : Հարսը կը լռէր , ձայն չէր հանէր . ա՛խ այդ անխօս , լացող լուծիւնը . . . :

Պատու Թամամը սկսաւ լալ . այդ բնտանիքի յիշատակները զինքը շատ յուզեցին . ան անգամ մը զխոց հիւանդը իր անկողինին մէջ . իրեն անանկ թուեցաւ թէ ան չպիտի ազատէր , թէ անկարելի էր որ ազատէր , հիւանդութիւնը շատ ծանր էր ու յուզումով ու ստրտալով գլուխը ծռեց . ծննդատունը խիտ մուծ էր , ձիկալը անսկաւ կը մարեր :

— Սա , ջան , հարս ջան , խօսէ , վա՛տ է վիճակդ , քեզի բժշկութիւն չկա՞յ . . . Դանիէլս էր որ պատճառեց այդ ցուր բեզի . . . առանց քեզի ի՜նչ պիտի ըլլայ մեր վիճակը , չէ՞ մի որ ես կարողութիւն չունիմ , մագերս ճերմկած եմ . . . :

Ու զլուխը կտա , երկարօրէն ան խօսեցաւ : Տեսիլը խոր լուս էր . անկողինէն ալ ոչ մէկ ձայն կու զար :

Յանկարծ դուռը զարկին ու ինքնիրեն բացուեցաւ :

Ճամբորդներ էին , հեռաւոր տեղ կ'երթային :

ՅԱԿՈԲ ՏԵՄԻՐՃԵԱՆ

ԿԻՆԸ,

ՀԵՂԻՆԱԿ ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՄԱՍՈՒԼԵՆ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

Այս անգամ պատմութեան ամփոփումը մը կը ներկայանայ Ենովք Արմէն: Այս գիրքով չէ՛ որ պիտի հաստատէր սա նշանաւորքները թէ՛ իր գրագրութի, բնականոյզի կարողութիւններուն կը միացնէ վիպագի տաղանդը: [Մերուման Պարսամեան]

Արեւ. Մամուլ

Կիներ բացի իր գրական արժէքէն, զարգացած տեսակէտով ալ ուշագրաւ նորութիւններ կը պարունակէ: Հաշտեալու ու սիրուն հասար մըն է, որ փափաք կը ներշնչէ մէկ ծայրէն միւսը կարդալու: [Խմբ.]

Արեւելք

Ենովք Արմէն [Կիներ] մէջ կ'զգուշանայ այն միւս գրականութեան, կ'զգուշանայ անորեւ մեծ տեսեակներու վարագործներուն ետին դալկացող կեանքէն. իր ուզածը դուրսի կեանքն է, Կեանքը, գլխաւորով, արեւին տակինը, իր յորդ ալլալանութեան մէջ: Ու նաեւ, իր մօտ փառաբանող մը կայ մարդկային սկզբնական վաղնջական բնագոյններուն, զոր երկինք կը հասնէ, զլխաւորով մը: Ենովք Արմէն յստիօրէն sensualiste է: [Արսաշես Յարութիւնեան]

Բիւզանդիոն

Անուշտ ամէն գրատը պիտի փափաքի ունենալ Ենովք Արմէնի այս հրատարակութիւնը, **Կիներ**, գրական գեղեցիկ վայելք մը բմբուխներու համար: [Ժիրաջը Շիրակցի]

Բիւրակն

Կիներ, հեղինակին գրչի այդ առաջնեկ զաւակը, նորութիւն մըն է իր յղացում: [Բարգեճն Վարդ. Կոչիսեան] **Լոյս**

Կիներ իր գրական արժանիքին կը միացնէ զարգացումը մը հիմնապէս առօրինակ ու բոլորովին նոր նշանակով, որ կը յատկանշէ **ԿԻՆԸ** ին համակրելի հեղինակը: [Խմբ.] **Ծաղիկ**

Երեսասարդ հեղինակը, որուն գրութեանը աշխարհը հանդիման կը կարդացունի օրաբերքներու եւ պարբերական հանդէսներու մէջ, այս անգամ իր մտածումները խաղաղօրէն է սիրուն ու կոկիկ հասարի մը մէջ, որուն զարգացումը, բուրքին ազնուութիւնը եւ գեղեցիկ նշանակը հանդիման կը պարզեւեմ ընթերցողին ունենալու անկէ հաս մը: Ձեռնապէս յանձնարարելի է այս գոյհի հասար: [Վահան Փափազեան] **Համրագիտակ**

Իր ընդհանուր հանգամանքով **Կիներ** կարդացուելու արժանի գիրք մըն է, լաւագոյն աշխատութիւններէն հեղինակին: [Յակոբ Տէր-Յակոբեան] **Մանգում**

“ԿԻՆԸ”

[ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ]

որ այս միջոցիս ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ շահերէ
usանալու համար դիմել՝ Պոլիս , Մեծ-Նոր-Խան,
Վերի յարկ , թիւ 55 , Յ. ՓՍԼԱԳԱՇԵԱՆԻ ԳԱՐՈՒՆ գրաստանը,
որ յանձնած եւեմ սակաւարիւ օրինակները :
Գինն է 5 դրշ. : Փօսքի ծախսով 5 ¹/₂ :

Գեղեցիկ հասորի մը տէր ըլլալու վստահութիւնով գնե-
ցե՛ք անվրէպ Թեոդիկի

“ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՅԸ”

որ պիտի գտնե՛ք Տարեցոյցէ մը բոլոր սպասուած քանկերը :
Գինը 10 դրշ. :

ԼՈՅՍ գրական-գեղարուեստական պատկերազարդ չաբաթաթեր-
թին վեցերորդ թիւը հրատարակ ելաւ հետեւեալ ճովա ու շահեկան
բովանդակութեամբ :

ԴՐԻԴՈՐ ԶՕՀՐԱՊ. — Հսկում

ՏԻԴՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ. — Յիշատակներ խնդրագրական կեանքէ

ՍԻՊԻԼ. — Մարգրիտ մանկակ [պատկերով]

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ. — Գիւղանկար

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ. — Կղերին զարգացումը

ՌՈՒԲԷՆ ՈՐԲԵՐԵԱՆ. — Առաջին տէր [պատկերով]

ՎԵՐԺԻՆ ՏԷՐ-ՈՍԿԻ. — Զրկումը

ԵԴՈՒԱՐԴ ԴՕԼԱՆՃԵԱՆ. — Մ. Պարսաւեանի «Պատմութի Մաղիկներ»ը

ՍԱՐԳԻՍ ԹԻԻԹԻՆՃԵԱՆ. — Գարեգին Ռշտունի [երկու պատկերով]

ԳԱՐԵԴԻՆ ՌՇՏՈՒՆԻ. — Սիրելի ինչ քան է : Կորսուած կոճակը :
Կրանքաւթնոյին :

32 էջ, գին՝ 40 փարս :

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒՆ

Հեղինակներէ և հրատարակիչներէ մեծնք՝ որ կը բաղձան Մալխի մէջ ծանուցուիլը իրենց հրատարակութեան , պէտք չէ մասնան մեր պայմանը թէ , 2 օրինակ զրկուած գիրքերը միայն նկատուած թեան կ'աւանդին և կը ծանուցուին :

ԱՐԵՒԵԼՔ ՕՐՍԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆալսաֆական . — Բա-
րանորդարութիւն . Կ. Պոլսոյ համար՝ տարեկան 80, վեցամսեայ 45
ՂՐԸ : Ղաւառներու համար՝ տարեկան 108 զր. , վեցամսեայ 60 զր. ,
և օտար երկիրներու համար՝ տարեկան 35 Ֆր. , վեցամսեայ 20
Ֆր. : Զեռքէ վաճառու՝ քաղք փանա : ԱՐԵՒԵԼՔ հրատարակ
կ'ելլէ ամէն օր , կէս օրին : Խնամալ բովանդակութեամբ , ըն-
տիր յօդուածներով , թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով :
ԱՐԵՒԵԼՔ, իր վերակալմամբ խմբագրութեամբ և իր կարող աշխա-
տակիցներով առաջնակարգ տեղ մը կը զբաւէ տեղական հայ մամուլին
մէջ , արժանացած՝ ընթերցողներու գնահատմանը : Իր առաւելութիւններէն
մէկն է ՊԼՏԿԵՐԱԶԱՐԴ ԸԼԼՈՂՈՒ հանգամանքը , որով իր ընթերցողնե-
րուն կը ներկայացնէ պարբերաբար Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տե-
սարաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուած-
ները , եկեղեցական , կրօնական , անտեսական-սեղանաւորական , եր-
կրագործական , իրաւաբանական և այլն , բացի գրական , բանասիրա-
կան գրուածքներէ , օրուան տեսութիւններէ ևն : ԱՐԵՒԵԼՔ վերաբերեալ
ամէն գրութիւն և բաժանորդագին ուղղել Տէր և Տնօրէն Գաբրիէլին
էֆ. Պոլսոյնի հասցէին , Ղալաթիա , Մահմուտէ Ճառատէսի , ուր կը
զանուին թերթին Տպարանը , Խմբագրատունը :



Je prends tous les jours
de la vraie
CREME DE MORUE
de la Ph^{ie} PEQUART de VERDON-s-Meuse
C'est très bon !!!
Petite mère, se méfie des produits
similaires ; mauvais et digérant mal.
Le Flacon : 3^{fr} 50 dans t^{es} Pharm^{ies}.
* SUPERIEURE à L'HUILE de FOIE de MORUE et aux EMULSIONS. *

նշանաւոր Տօքթ. Բէքառի
այս էմուլսիօնը կը գերա-
զանցէ հրատարակի վրայ
գտնուած բոլոր իր նմաննե-
րը : Զուկի իւղի տեղ կը դո-
ւածուի և անկէ աւելի
օգուտ ունի ազոց և տկալի

անձերու : Միակ ներկայացուցիչ Թուրքիոյ , Ո. Սօլախեանց , Կ. Պոլսոյ :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ կը դարձանէ ամէն տե-
սակ ակադի և լինաի հիւանդութիւնները , փոած ակաւները կը լեցնէ՝
առողջ ակաւներու պէս երկար տանն գործածուելու պայմանով :

ԲՈՂՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՎ , նուրբ , ճաշակաւոր և գիմացկուն
արուեստական ակաւներ կը պարարտուէ , բնականին ճիշդ նման :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարմանատան մէջ , Բերա , Մեծ
Բարմաք-Գարու , թիւ 8 : Կարօտ հիւանդները ձրի կը դարձանէ հինգ-
շաբթի օրերը՝ Բերաի Ազքատախմամ դարմանատունին մէջ :

Կիրակի օրերը ժաւադրութեանը կ'ընդունին :

ՄԻԱՄԻՏԻ ՄԸ ԱՐԿԱՇՆԵՐԸ

Գեղեցիկ տարագրութիւնով, գեղարուեստական կողքով, գրական հրապարակչ ներքինով: Օրուան գիրքը և ամէնէն խօսուած հրատարակութիւնը: Էջ 280: Գինը՝ 7 զրշ.: Կեդրոնատեղ՝ Սթամպոլ, Շիրին խան, թիւ 7, Օննիկ և Բնիկ: Կը գտնուի ամէն գրավաճառի քով:

ԳՐԱՏՈՒՆ ՀԱՊԷՇԵԱՆ. Ս.Մ.Ս.Ս.Ս.: Ամասիայի և չրջականերու

րու գրական պէտքերուն լիովին գոհացում տալու համար է որ հիմնուած է այս նոր դրատունը, ուր գիտակից խնամքով կը պատրաստուին տրուած բոլոր յանձնարարութիւնները: Մասնաւորապէս յանձնարարելի է այս գրատունը բոլոր ուսուցիչներուն ու գրասէրներուն, իրր միակ կեդրոնատեղ լաւագոյն գտագիրքերու և լաւագոյն հրատարակութիւններու:

Միակ առտուան Հայաթերթը, կը հրատարակուի ար-
ՄԱՆԶՈՒՄԷ շաբաթին, և առտուն խիստ կանուխ՝ կը գտնուի Պոլիսի և արուարձաններու ամէն կողմը, բովանդակելով հեռագիրներ, քաղաքական, ներքին, եկեղեցական ու կրթական լուրեր, գրական, անդտեսական և ընկերային յօդուածներ: Զորեքշաբթի և չաբաթ օրերը կը հրատարակուի առանց ծանուցումի, չորրորդ էջը յատկացնելով առեւտրական և գրական գրուածքներու: Գինն է 10 փարա: Տարեկան բաժանորդագրութիւնն է Պոլիս՝ 80 զրշ., գաւառ՝ 108, արտասահման՝ 25 ֆր.: Վեցամսեայ՝ Պոլիս՝ 50, գաւառ՝ 60, արտասահման՝ 18 ֆր.: Ամէն գրութիւն ուղղել Տէր և Տնօրէն Յովհաննէս Ֆ. էֆ. Գոյսէրեանի հասցէին՝ 38, Պապը Ալի Ճատտէսի:

Դպրոցներու համար անհրաժեշտ

Դրասկենսկներու համար կարելոք

«Սաթոն»ներու համար գեղեցիկագոյն զարդը

ՀԱՅԵՐԷՆ ԵՐԿՐԱԳՈՒՆՏԸ

Հրապարակ ելաւ՝ վաւերացուած Հանր. Կրթութեան Նախարարութենէն: Վարժարաններու վարիչներուն, բոլոր ընտանիքի հայերուն և հայ վաճառականներուն կը յանձնարարուի մէյ մէկ հաւ գնել այս կարեւոր և գեղեցիկ վարդէն: Գինն է չրջանակով 85, առանց չրջանակի 65 զրշ. գաւառներու համար՝ իրր մոտուկի և փոխադրութեան ծախք 15 զրշ. աւելի: Գիմել՝ Պապը Ալի Ճատտէսի, թիւ 56, Յովհ. էֆ. Ալշաւարի «Օսմանլը» Դրատունը:

5րդ. ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՏՈՒՄ «ՍԻՆԿԷՐ»Ի

Բերա, Մեծ.Փողոց, Թ. 343, Ա. Յարկ

Ամեն օր քաջ է

Մ Ո Ւ Տ Ք Ը Զ Ր Ի

Ա. Կարգի մրցանակ հետեւայ ցուցանադէսներէն. Բարիգ. 1900, Անգ-Լուի 1904, Միլան 1906, Պրուսա 1906:

“ՄԱՍԻՍ,,Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և գաւառներու համար տարեկան 60 դրչ.:

Արտասահմանի » » 14 ֆրանք:

Թղթատարութեան ծախքը մեր վրայ:

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր տարգելները,

միշտ ձրիաբար, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ:

Մանիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է:

Դրամ կարելի է ղրկել փոխանակադիրով, օտմանեան կամ

օտար մանսա-փօսքով և օտմ. թղթատարական համակադրոշ-

մով, 20 հատը մէկ մէծիտի հաշիւով:

Չհրատարակուած ձեռագիրները ետ չեն զարձուիր:

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Է Ն

“ՄԱՍԻՍ,,Ի Հասցէով

Պապը Ա.Լի ճաւսէսի, Թիւ 38

درعليه باب عالی جاده سنده نومرو ۳۸ «ماسيس» غزته سی ادارہ خانہ سی

Rédaction de la Revue «MASSIS»

N. 38, Avenue de la Sublime Porte

CONSTANTINOPLE.

“ՄԱՍԻՍ”ի Նոր Շրջանի Ա. Տարիի հաւաքածոն, որ 1000 էջէ բաղկացած գրական գեղեցիկ հասոր մը կը կազմէ, հրնայ ստացուիլ խմբագրութենէս, կանխիկ փոխար-
ժէովը՝ 60 դրչ. . կազմուած 65: Թղթասարով ղրկուելիք
Հասորներու համար պէտք է 5 դրչ. աւելի վճարել:

Ն Յ Յ Յ

Նոր Տարուան առաջին նորոտքիւնը

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆԻ

ԳԱՆՁ ԻՐԱԳԻՏԱԿԱՆ

Այս գիրքին համար յոտկապէս փորագրուած 300 պատկերներով .—
Անմրձելիօրէն ընտրելագոյն Դասագիրքը՝ Տարր. Դասընթացքի երկսեռ
աշակերտներու համար: Դրչ. 5 դրչ.: Կեդրոնատեղն է հեղինակին ԳԱ-
ՐՈՒՆ Դրատունը, Կ. Պոլիս, Մեծ Նոր խան, Վերի յարկ, Թիւ 55: